Հավելված 6
«ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-07/24»* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-07/24/1

Ք.Երևան «31» հուլիս 2024 թ.

«Հայոց Ցեղասպանության Թանգարան-Ինստիտուտ» հիմնադրամը ի դեմս **Էդիտա Գզոյանի,** որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՍՈՖՈՆ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Մ.Մաթոսյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում որա մասին նախ-

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2 802 000 /երկու միլիոն ութ հարյուր երկու հազար / ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:[1] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օրը:** Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[2]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից*

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին

---

[3] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն*

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կիանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ ՀՎՀՀ՝ 00007386 Ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճ 8/8 Ամերիաբանկ ՓԲԸ Հ/Հ՝ 1570092753870100 Տնօրենի՝ Լ.Գրիգոյան /ստորագրություն/ Կ.Տ	«Սոֆոն» ՍՊԸ ՀՎՀՀ 00232725 Հասցե՝ ք.Գյումրի, Սայաթ-Նովա 3/3 Ինեկոբանկ ՓԲԸ Հ/Հ 2050122232641001 Տնօրեն՝ Մ.Մաթոսյան /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«31» հուլիսի 2024 թ. կնքված
ՀՅԹԻ-ԳՀԱՊՁԲ-07/24/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
32231400 /1	**Տեսախցիկ 1**	Canon XA75 UHD 4K ,Camcorder	**Տեսախցիկ հետևյալ տեխնիկական տվյալներով՝** Պատկերի տվիչ՝ 1.0 տեսակի CMOS պատկերի տվիչ Զտիչ՝ RGB հիմնական գույների զտիչ Պիքսելների ընդհանուր քանակ՝ առնվազն 13,4 ՄՊ Յուրաքանչյուր պատկերի տվիչի արդյունավետ պիքսելների քանակ- առնվազն 8,29 ՄՊ (3840 x 2160) Օբյեկտի լուսավորվածության ընդգրկույթը՝ առնվազն 0.1 լյուքսից 100000 լյուքս Նվազագույն լուսավորվածությունը (PAL)՝ առնվազն 0.1 լյուքս՝ թույլ լուսավորության ռեժիմում, պահաժամը՝ 1/2 վայրկյան առնվազն 1.4 լյուքս՝ P ռեժիմ (ծրագրային ավտոլուսակայում՝ AE), 50.00P, պահաժամը՝ 1/25 վայրկյան, ինքնաշխատ երկարատև պահաժամի միացված լինելու դեպքում **Պատկերի մշակման պրոցեսոր**՝ Տեսակ DIGIC DV 6 Գույների ընդհատավորման սխեմա՝ YCC 4:2:0 8 բիթ **Օբյեկտիվ** Խոշորացման-փոքրացման գործակից՝ 15 անգամյա օպտիկական Կիզակետային հեռավորություն՝ (35 մմ ժապավենին համարժեք) առնվազն 25.5 - 382.5 մմ (ստանդարտ կայունացում / կայունացումն անջատված է) Կիզակետման նվազագույն հեռավորություն՝ 1 սմ լայն անկյան դեպքում, 60 սմ խոշորացման-փոքրացման ողջ	հատ	1318800	1318800	1	**Ք.Երևան , Ծիծեռնակաբերդի խճ.8/8**	1	**Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում**

			ընդգրկույթում Առավելագույն դիաֆրագմա՝ f/2.8 - 4.5 Դիաֆրագմայի թերթիկների թիվ՝ 9 հատ Զտիչի տրամագիծ՝ 58 մմ Պատկերի կայունացման համակարգ՝ օպտիկական համակարգ (օբյեկտիվի տեղաշարժ) և էլեկտրոնային կայունարար՝ դինամիկ, ստանդարտ, բարելավված կայունացում, անջատված Չեզոք զտիչ՝ խտության 3 մակարդակ՝ ND 1/4, ND 1/16 եւ ND 1/64, փոխարկելի տուրել, մեխանիկական շարժաբերով Խոշորացման-փոքրացման ղեկավարում՝ խոշորացման-փոքրացման սահալծակային փոխարկիչներ իրանի և բռնակի վրա, հպէկրան կամ հեռակառավարվող վահանակ՝ ձեռքով խոշորացման-փոքրացման օղակի/օբյեկտիվի վրա կիզակետման ընտրության հնարավորության առկայություն, բարձր արագությամբ և սահուն խոշորացման-փոքրացման ռեժիմներ: Խոշորացման-փոքրացման արագություն՝ փոփոխական (միայն իրանի վրայի սահալծակ) կամ հաստատուն արագություն (իրանի եւ բռնակի վրայի սահալծակ՝ արագ/նորմալ/դանդաղ ռեժիմ, յուրաքանչյուր ռեժիմի համար հասանելի արագության մակարդակ՝ 16 արժեք) Կիզակետման կառավարում- Ձեռքով՝ օբյեկտիվի օղակ եւ կետի ընտրություն հպէկրանի վրա (խոշորացման գործառույթ եւ հստակության ընդգծում), կիզակետման ֆիքսված դիրք: Ավտոկիզակետում՝ հպման էկրանի միջոցով ավտոֆոկուսի կետի ընտրություն, դեմքի ճանաչում և շարժման հետեւում, սենսորային հետեւում, ավտոկիզակետում միայն դեմքի վրա: Դեմքի շրջանակը ցույց է տալիս հետևվող օբյեկտը Կիզակետման համակարգ Dual Pixel CMOS AF, տեսադաշտից 80% ուղղահայաց/80% հորիզոնական ճանաչաման տիրույթ: Հակադիր կիզակետում Ավտոկիզակետման ռեժիմներ՝ անդադար, ձեռքով՝ ավտոկիզակետման օժանդակությամբ, դեմքի ճանաչում և հետևում, միայն դեմքերի վրա կիզակետում Օժանդակություն ձեռքով կիզակետման դեպքում՝ Dual Pixel Focus Guide, հստակության ընդգծում, խոշորացում Դիաֆրագմայի կառավարում՝ հպէկրան, ինքնաշխատ Թվային խոշորացում- փոքրացում /հեռափոխարկիչ՝ 20-պատիկ թվային խոշորացում (300-պատիկ օպտիկական							

			խոշորացմամբ) և 40-պատիկ թվային խոշարացում (600-պատիկ օպտիկական խոշորացմամբ): AUTO ռեժիմում թվային խոշորացում-փոքրացում անհասանելիությամբ: Երկանգամյա թվային հեռափոխարկիչ (հասանելի չէ թվային խոշորացման-փոքրացման դեպքում) **Տեսաձայնագրում** Տեսաֆայլերի պահպանման կրիչեր՝ SD/SDHC/SDXC հիշողության քարտեր (հիշողության քարտի 2 բնիկ) Տեսակ՝ U3 դաս Տեսաձայնագրության տևողություն MP4: 150Mbps: առնվազն 55 րոպե / 35Mbps: առնվազն 240 րոպե/ 17Mbps: առնվազն 495 րոպե , XF-AVC:160Mbps, առնվազն 50 րոպե/45 Mbps: առնվազն 185 րոպե Ֆայլերի տեսաձայնագրման համակարգ՝ FAT32/exFAT Ներքին տեսաձայնագրման ձևաչափ (PAL) ՝ XF-AVC: 3840 x 2160 / 25.00P (160 Mbps) 1920 x 1080 / 50.00P, 50.00i, 25.00P (45 Mbps) MP4: 3840 x 2160 / 25.00P(150 Mbps) 1920 x 1080 / 50.00P, 25.00P (35, 17 Mbps) Տեսաձայնագրում արտաքին սարքի վրա HDMI ելք (նկարահանելիս), UHD տեսաձայնագրման ռեժիմ. 1920 x 1080 / 25.00P, 50.00P (արագացվածի և դանդաղացվածի դեպքում), 50.00i (PsF ռեժիմ); 1280 x 720 / 50.00P YCC 4:2:2 8- բիթ Full HD տեսանկարահանման ռեժիմ՝ 1920 x 1080 50.00P/25.00P/50i ; 1280 x720 50.00P YCC4:2:2 10- բիթ SDI ելք (նկարահանելիս). UHD տեսաձայնագրման ռեժիմ՝ 1920 x 1080 / 25.00P, 50.00P (արագացվածի և դանդաղացվածի դեպքում), 50.00i (PsF ռեժիմ); 1280 x 720 / 50.00P YCC 4:2:2 8-bit Full HD տեսանկարահանման ռեժիմ՝ 1920 x 1080 50.00P/25.00P/50i ; 1280 x720 50.00P YCC4:2:2 10-բիթ, Դանդաղացված/արագացված նկարահանում (PAL)՝ 3840 x 2160 / 25.00P: x2, x4, x10, x20, x60, x120, x600, x1200 1920 x 1080 / 50.00P: x2, x4, x10, x20, x60, x120, x600, x1200 1920 x 1080 / 25.00P: x0.5 Նախնական տեսաձայնագրման ֆունկցիա՝ 3 վայրկյան , Լուսանկարներ JPEG մինչեւ 3840x2160 Լուսանկարների պահպանման կրիչ՝ SD քարտ							

			Համակարգ Դիսփլեյի տեսակ՝ ունակային հեղուկաբյուրեղային հպէկրան Չափս 8.8 սմ անկյունագծով, մոտավորապես 2,760,000 կետ (1280 x RGB x 720) Կիզակետման օժանդակում՝ հստակության ընդգծում/խոշորացում Ուրվագծերի ուժեղացում՝ առանձնացման ընտրովի գույն՝ կարմիր/կապույտ/դեղին «Զեբր» շաբլոն՝ 70% կամ 100% վերահսկիչ մակարդակ Մարկերներ՝ ցանց (սպիտակ/մոխրագույն), մակարդակ (սպիտակ/մոխրագույն), 4:3 (սպիտակ/մոխրագույն) **Էլեկտրոնային դիտան** Չափս 0.92 սմ անկյունագծով, մոտավորապես 1,770,000 կետ, (1024 xRGB x 576) Դիոպտրական շտկում՝ +2.0-ից -5.5 դիոպտրիա **Մուտքեր/Ելքեր** Աուդիո մուտք՝ XLR եռահպակ հարակցիչ (2 հատ) 48 Վ ֆանտոմային սնուցմամբ, գծային և խոսափողային մուտքեր հանովի բռնակի վրա, 3,5 մմ մուտքային հարակցիչ խոսափողի համար (2,4 Վ հաստատուն հոսանքի սնուցմամբ), ներկառուցված խոսափող Ականջակալների ելք՝ 3,5 մմ ստերեո հարակցիչ HDMI ելք՝ HDMITM մինի հարակցիչ՝ Ժամանակային կոդը կարող է դրվել HDMI ելքի վրա USB՝ Hi-Speed USB Type-C-ին (USB 2.0) համարժեք: Օժանդակվում է երկկետ կապի դասը եւ UVC SDI ելք՝ 3G-SDI Ժամանակային կոդ՝ մաքուր ժամանակի հաշվարկ / ինքնավար Հաստատուն հոսանքի մուտք՝ USB-C Հեռակառավարման հարակցիչ՝ 2,5 մմ հարակցիչ **Այլ տվյալներ** Ազդանշանային լամպ՝ հանովի բռնակի վրա Գունավոր շերտեր (PAL)՝ SMPTE, ARIB կամ EBU, 1 ԿՀց տոնով Հավելյալ պարագաների հարակցիչ՝ «Սառը ոտնաման» (cold shoe) Նշանակվող կոճակներ՝ 5 նշանակովի կոճակ Օգտատիրոջ ընտրանքի սկավառակ՝							

			Դիաֆրագմա/պահաժամ/ուժեղացում, AGC սահմանափակում, լուսակայման համակշռում, անջատված Վիդեո ելք (UVC)՝ տեսաձայնագրման համակարգ՝ Motion JPEG. Լուծաչափ՝ 1920×1080 (եթե հիմնական լուծաչափը 1280×720 չէ) 1280×720 (եթե հիմնական լուծաչափը 1280×720-ն է), կադրերի հաճախականությունը՝ 25 կադր/վ **Լուսակայում** Լուսակայման չափում՝ Կենտրոնակշռված չափում՝ AUTO, P, Av, Tv, դիմանկար, սպորտ, թույլ լուսավորություն և ինֆրակարմիր ռեժիմ Սեգմենտային գնահատման չափում Գիշերային պատկեր, ձյուն, լողափ, մայրամուտ և լուսարձակ «Հրավառություն» ռեժիմում առանց չափման, մշտական լուսակայում Լուսակայման համակշռում՝ բաց հատվածների ավտոլուսակայում, սովորական, լուսակայման ֆիքսում, հետևի լույսի ինքնաշխատ համակշռում Լուսարկման բլոկավորման հնարավորության առկայություն ISO ինքնաշխատ կարգավորում /ուժեղացման ինքնաշխատ կարգավորում՝ ինքնաշխատ / ձեռքով Ուժեղացման ինքնաշխատ կարգավորման սահման՝ 0-38 դԲ (1 դԲ քայլով) Wide DR: 9-38 դԲ (1 դԲ քայլով) **Պահաժամ** Կառավարման ռեժիմներ Ինքնաշխատ, P, Tv, ձեռքով կարգավորվող Պահաժամ (PAL) 1/6 - 1/2000 վրկ. (1/2 - 1/500 վրկ. թույլ լուսավորության ռեժիմում) Փականակի արժեքների ընդգրկույթը հասանելի է նկարահանման ռեժիմներից կախված: Երկար պահաժամ (SLS) 50.00P: Միացրած ինքնաշխատ երկար պահաժամի դեպքում՝ 1/25-ից 1/500 վրկ. Անջատված ինքնաշխատ երկար պահաժամի դեպքում՝ 1/50-ից 1/500 վրկ. 25.00P: Միացրած ինքնաշխատ երկար պահաժամի դեպքում՝ 1/12.5-ից 1/500 վրկ. Անջատված ինքնաշխատ երկար պահաժամի դեպքում՝							

			1/25-ից 1/500 վրկ. **Սպիտակի հաշվեկշիռ** Ինքնաշխատ Նախադրված Ցերեկային լույս (առնվազն 5600 K), շիկացման լամպ (առնվազն 3200 K) Ձեռքով կարգավորում Գունային ջերմաստիճանի ընդգրկույթը՝ 2000–15000 K Ելքային արժեքը 1-ին եւ 2-րդ տեղադրումների համար՝ 5600 K **Նկարահանման ռեժիմները** Ծրագրային ավտոլուսակայում AUTO ռեժիմ Ձեռքով կարգավորվող ռեժիմ (M) Ծրագրային ավտոլուսակայում (P), ինքնաշխատ լուսակայում փականակի առաջնությամբ (Tv), ինքնաշխատ լուսակայում դիաֆրագմայի առաջնությամբ (Av), ձեռքով կարգավորվող լուսակայում (M), SNC (դիմանկար, սպորտ, գիշերային տեսարան, ձյուն, լողափ, մայրամուտ, թույլ լուսավորություն, լուսարձակ, հրավառություն), ինֆրակարմիր ռեժիմ Օգտատիրոջ կողմից պատկերի կարգավորումների մենյու՝ C1: սովորական (BT.709 սովորական / BT.709) C2: Wide DR (BT.709 Wide DR / BT.709) C3: LOG3 (Canon Log 3 / BT.709) C4: EOS ստանդարտ (EOS Standard / BT.709) C5-C6: USER05 եւ USER06 (նույնը, ինչ C1) Պատկերի տեսքի կարգավորումներ՝ ստանդարտ , չեզոք Լայն դինամիկ ընդգրկույթ Մեներանգային Ստանդարտ (կարգավորումներ՝ հստակություն, ցայտունակություն, գույնի խորություն), Ինֆրակարմիր նկարահանման ռեժիմի առկայություն Ներկառուցված ինֆրակարմիր լամպի առկայություն, հանովի բռնակի վրա, ալիքի երկարությունը՝ 850 նմ (մերձակա ինֆրակարմիր տիրույթ) **Ձայն** Ձայնագրության ձեւաչափ՝ MPEG-2 AAC-LC (16 բիթանոց երկուղի ձայն) / LPCM (16 բիթանոց քառուղի ձայն) Ձայնի կառավարում Ձեռքով/ինքնաշխատ, անկախ երկուղի գիծ/ Խոսափող / Խոսափող +մուտք 48 Վ							

			Յուրաքանչյուր ձայնուղու համար բարձրության մակարդակի անկախ կառավարում (-∞-ից +18 դԲ) Ձայնային ազդանշանի բարձրության անկախ սահմանափակիչ (2 ձայնուղի) Ձայնի մաքրում Հենարանային տոն 1 կՀց, -12 դԲ / -18 դԲ / -20 դԲ / անջատված Խոսափողային նվազիչ՝ Միացված/անջատված (20 դԲ) Խոսափողի ազդանշանի մակարդակի ցուցիչ առկայություն **Աքսեսուարներ** Առաքման լրակազմ՝ օբյեկտիվի լուսապաշտպան բլենդ սահափականով, խոսափողի բռնիչ, բռնակի բլոկ, մարտկոց, USB PD-E1 սնուցման ադապտեր, սնուցման լար **Սնուցման աղբյուր** Մարտկոց Մտնում է լրակազմի մեջ Էներգասպառում MP4, 150 Մբիթ/վ / XF-AVC, 160 Մբիթ/վ, 25.00P՝ 5,2 Վտ Տեսագրության տեւողություն MP4, 150 Մբիթ/վ / XF-AVC, 160 Մբիթ/վ, 25.00P՝ առավելագույն՝ 140 րոպե, միջինը 75 րոպե **Ֆիզիկական բնութագրեր** Չափսերը Միայն իրանը՝ մոտավորապես 110 x 91 x 214 մմ Լուսապաշտպան բլենդի, մարտկոցի եւ խոսափողի բռնիչի և բռնակի հետ միասին՝ մոտավորապես 140 x 216 x 265 մմ Քաշը՝ (միայն իրանը) 990 գրամ Քաշը (աքսեսուարների հետ միասին) ՝ 1465 գրամ Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ 0-ից 40 °C 85% հարաբերական խոնավության պայմաններում **Տեսախցիկի հետ առաքվող բոլոր բաղադրիչների բաղարձակ փոխադարձ համատեղելիությունը երաշխավորված է արտադրողի կողմից: Առաջարկվող տեսախցիկի և նրա հետ մատակակարվող՝ արտադրողի կողմից նախատեսված բոլոր անհրաժեշտ պարագաները առկա են:** **Երաշխիքային սպասարկում. առաջարկվող տեսախցիկի և նրա հետ մատակարարվող բոլոր պարագաների համար տրամադրված է արտադրողի կողմից տրված 1 տարվա**							

			երաշխիքային սպասարկում: Տեսախցիկի և նրա հետ մատակարարվող բոլոր պարագաները չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորմամբ:							

32231400 /2	Տեսախցիկ 2	Canon XA65 4K UHD	Տեսախցիկ հետևյալ տեխնիկական տվյալներով՝ **Պատկերի տվիչ՝** 1/2.3 տեսակի CMOS պատկերի տվիչ Զտիչ RGB հիմնական գույների զտիչ Պիքսելների ընդհանուր քանակ՝ առնվազն 21 ՄՊ Յուրաքանչյուր պատկերի տվիչի արդյունավետ պիքսելների քանակը՝ առնվազն 8,2 ՄՊ (3840 x 2160) Օբյեկտի լուսավորվածության ընդգրկույթ՝ 0.3 լյուքսից 100000 լյուքս Նվազագույն լուսավորվածությունը (PAL)՝ P ռեժիմ (ծրագրային ավտոլուսակայում՝ ԱԼ)՝ առնվազն 4,2 լյուքս (1/25 վրկ. պահաժամ՝ ինքնաշխատ երկար պահաժամի գործառույթի միացված լինելու դեպքում) Թույլ լուսավորության դեպքում՝ նկարահանման ռեժիմը՝ առնվազն 0,3 լյուքս (1/2 վրկ. պահաժամ) Պատկերի մշակման պրոցեսորի չափանիշները՝ Տեսակը՝ DIGIC DV 6, Գույների ընդհատավորման սխեմա՝ YCC 4:2:0 8 բիթ **Օբյեկտիվ-** Խոշորացման-փոքրացման գործակից՝ 20 անգամյա օպտիկական Կիզակետային հեռավորություն (35 մմ ժապավենին համարժեք)՝ առնվազն 29,3–601 մմ (Standard IS ռեժիմ / կայունացումն անջատված ռեժիմ) Կիզակետման նվազագույն հեռավորություն 1 սմ լայն անկյան դեպքում- 60 սմ խոշորացման-փոքրացման ողջ ընդգրկույթում Առավելագույն դիաֆրագմա՝ f/1.8–f/2.8 («Դիաֆրագմային գերակայություն» և «Ձեռքով կարգավորում» ռեժիմներ), Դիաֆրագմայի թերթիկների թիվը՝8 հատ Զտիչի տրամագիծը՝58 մմ **Պատկերի կայունացման համակարգ** ՝ Օպտիկական համակարգ (օբյեկտիվի տեղաշարժ) և էլեկտրոնային կայունարար՝ դինամիկ, ստանդարտ, բարելավված կայունացումով, անջատված Ձեզոք զտիչ՝ Ներկառուցված գրադացիոն զտիչ («Ավտո» և «Անջատված») Խոշորացման-փոքրացման ղեկավարում՝Խոշորացման-փոքրացման սահալծակային փոխարկիչներ իրանի և բռնակի վրա: Ձեռքով խոշորացման-փոքրացման օղակի/օբյեկտիվի վրա կիզակետման ընտրության հնարավորություն, բարձր արագությամբ և սահուն խոշորացման-փոքրացման ռեժիմների առկայություն: Խոշորացման-փոքրացման արագություն՝ Փոփոխական (միայն իրանի վրայի սահալծակ) կամ հաստատուն արագություն (իրանի և բռնակի վրայի սահալծակ՝ արագ/նորմալ/դանդաղ ռեժիմներով, յուրաքանչյուր ռեժիմի	հատ	1155600	1155600	1	**Ք.Երևան , Ծիծեռնակաբերդի խճ.8/8**	1	**Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում**

			համար հասանելի է արագության մակարդակի 16 արժեք) Ձեռքով կիզակետման կառավարում, օբյեկտիվի օղակի առկայություն և կետի ընտրություն հպէկրանի վրա (խոշորացման գործառույթ և հստակության ընդգծում), կիզակետման ֆիքսված դիրքով: **Ավտոկիզակետում՝** հպման էկրանի միջոցով ավտոֆոկուսի կետի ընտրություն, դեմքի ճանաչում և շարժման հետևում, սենսորային հետևում, ավտոկիզակետում միայն դեմքի վրա: (ակնթարթային ավտոկիզակետում, միջին ավտոկիզակետում, սովորական ավտոկիզակետում) **Կիզակետման համակարգ՝** հիբրիդ ավտոկիզակետում (բարձր/միջին արագություն): TTL տեսաազդանշանի հայտնաբերման համակարգի եւ ֆազերի տարբերության չափման համակարգի համադրության կիրառմամբ: Սովորական ավտոկիզակետում: TTL, ավտոկիզակետում ցայտունակության հիման վրա : Սովորական ավտոկիզակետում՝ TTL, ավտոկիզակետում ցայտունակության հիման վրա Դիաֆրագմայի կառավարում՝ հպէկրան, ինքնաշխատ Թվային խոշորացում-փոքրացում /հեռափոխարկիչ՝ 20-պատիկ թվային խոշորացմամբ (400-պատիկ օպտիկական խոշորացմամբ) և 40-պատիկ թվային խոշարացմամբ (800-պատիկ օպտիկական խոշորացմամբ): AUTO ռեժիմում թվային խոշորացման-փոքրացման հնարավորության անհասանելիությամբ: Երկանգամյա թվային հեռափոխարկիչով: **Տեսաձայնագրում** Տեսաֆայլերի պահպանման կրիչերով՝ SD/SDHC/SDXC հիշողության քարտեր (հիշողության քարտի 2 բնիկ) Տեսաձայնագրության տևողություն հնարավորություն՝ 150 Մբ/վ՝ 55 րոպե, 35 Մբ/վ՝ 240 րոպե, 17 Մբ/վ՝ 495 րոպե Ֆայլերի տեսաձայնագրման համակարգ՝ FAT32/exFAT Ներքին տեսաձայնագրման ձևաչափ՝ (PAL) XF-AVC-3840 x 2160 / 25.00P (160 Մբ/վ), 1920 x 1080 / 50.00P, 50.00i, 25.00P (45 Մբ/վ) MP4- 3840 x 2160 / 25.00P(150 Մբ/վ), 1920 x 1080 / 50.00P, 25.00P (35, 17 Մբ/վ) Արտաքին սարքին տեսաձայնագրում ՝ HDMI ելք (նկարահանելիս), UHD տեսաձայնագրման ռեժիմ- 1920 x 1080 / 25.00P, 50.00P (արագացվածի և դանդաղացվածի դեպքում), 50.00i (PsF ռեժիմ); 1280 x 720 / 50.00P YCC 4:2:2 8 բիթ Full HD տեսանկարահանման ռեժիմ- 1920 x 1080 50.00P/25.00P/50i; 1280 x 720 50.00P YCC 4:2:2 10 բիթ							

			SDI ելք (նկարահանելիս). UHD տեսաձայնագրման ռեժիմ.-1920 x 1080 / 25.00P, 50.00P (արագացվածի և դանդաղացվածի դեպքում), 50.00i (PsF ռեժիմ); 1280 x 720 / 50.00P YCC 4:2:2 8 բիթ Full HD տեսանկարահանման ռեժիմ.-1920 x 1080 50.00P/25.00P/50i; 1280 x 720 50.00P YCC 4:2:2 10 բիթ Դանդաղացված/արագացված նկարահանում (PAL) 3840 x 2160 / 25.00P: x2, x4, x10, x20, x60, x120, x600, x1200, 1920 x 1080 / 50.00P: x2, x4, x10, x20, x60, x120, x600, x1200, 1920 x 1080 / 25.00P: x0,5 Նախնական տեսաձայնագրման ֆունկցիա՝ 3 վայրկյան Լուսանկարների որակ՝ JPEG մինչև 3840x2160 Լուսանկարների պահպանման կրիչ՝ SD քարտ **Համակարգ** Դիսփլեյի տեսակ՝ ունակային հեղուկաբյուրեղային հպէկրան Չափը՝ 8.8 սմ անկյունագծով, առնվազն 2,760,000 կետ (1280 x RGB x 720) Կիզակետման օժանդակում՝ հստակության ընդգծում/խոշորացում Ուրվագծերի ուժեղացման հնարավորություն՝ առանձնացման ընտրովի գույն՝ կարմիր/կապույտ/դեղին «Զեբր» շաբլոնի հնարավորություն՝ 70% կամ 100% վերահսկիչ մակարդակ Մարկերներ՝ Ցանց (սպիտակ/մոխրագույն), մակարդակ (սպիտակ/մոխրագույն), 4:3 (սպիտակ/մոխրագույն) Էլեկտրոնային դիտան՝ Չափը-0.92 սմ անկյունագծով, , առնվազն 1,770,000 կետ, (1024 x RGB x 576), Դիոպտրական շտկումը՝ +2.0-ից -5.5 դիոպտրիա Մուտքեր/Ելքեր- Աուդիո մուտք՝ XLR եռահպակ հարակցիչ (2 հատ) 48 Վ ֆանտոմային սնուցմամբ, գծային և **խոսափող**ային մուտքեր հանովի բռնակի վրա, 3,5 մմ մուտքային հարակցիչ խոսափողի համար (2,4 Վ հաստատուն հոսանքի սնուցմամբ), ներկառուցված խոսափող Ականջակալների ելք՝ 3,5 մմ ստերեո հարակցիչ HDMI ելք՝ HDMITM մինի հարակցիչ USB `Type-C-Hi-Speed USB-ին (USB 2.0) համարժեք: Երկկետ կապի դասի օժանդակմամբ և UVC SDI ելք 3G-SDI Ժամանակային կոդը՝ մաքուր ժամանակի հաշվարկ / ինքնավար Հաստատուն հոսանքի մուտք `USB-C Հեռակառավարման հարակցիչ՝ 2,5 մմ հարակցիչ Այլ տվյալներ՝ Ազդանշանային լամպ՝ հանովի բռնակի վրա							

			Գունավոր շերտեր (PAL)՝ SMPTE, ARIB կամ EBU, 1 կՀց տոնով **Հավելյալ պարագաների հարակցիչ՝** «Սառը ոտնաման» (cold shoe) Նշանակվող կոճակներ՝ 5 նշանակովի կոճակ Օգտատիրոջ ընտրանքի սկավառակ՝ դիաֆրագմա/պահաժամ/ուժեղացում, AGC սահմանափակում, լուսակայման համակշռում, անջատված **Լուսակայում՝** Լուսակայման չափում ը՝ կենտրոնակշռված չափում AUTO, P, Av, Tv, դիմանկար, սպորտ, թույլ լուսավորություն և ինֆրակարմիր ռեժիմ Սեգմենտային գնահատման չափում Գիշերային պատկեր, ձյուն, լողափ, մայրամուտ և լուսարձակ, «Հրավառություն» ռեժիմում առանց չափման, մշտական լուսակայում Լուսակայման համակշռում՝ բաց հատվածների ավտոլուսակայում, սովորական, լուսակայման ֆիքսում, հետևի լույսի ինքնաշխատ համակշռում Լուսակայման բլոկավորման առկայություն ISO ինքնաշխատ կարգավորում / ուժեղացման ինքնաշխատ կարգավորումը՝ Ինքնաշխատ / ձեռքով Ուժեղացման ինքնաշխատ կարգավորման սահման՝ 0-23 դԲ (1 դԲ քայլով) **Պահաժամ** Կառավարման ռեժիմներ՝ ինքնաշխատ, P, Tv, ձեռքով կարգավորվող Պահաժամ (PAL)՝ 1/6 - 1/2000 վրկ.(1/2 - 1/500 վրկ. թույլ լուսավորության ռեժիմում) Երկար պահաժամ (SLS) 50.00P: Միացրած ինքնաշխատ երկար պահաժամի դեպքում՝ 1/25-ից 1/500 վրկ. Անջատված ինքնաշխատ երկար պահաժամի դեպքում՝ 1/50-ից 1/500 վրկ. 25.00P: Միացրած ինքնաշխատ երկար պահաժամի դեպքում՝ 1/12,5-ից 1/500 վրկ. Անջատված ինքնաշխատ երկար պահաժամի դեպքում՝ 1/25-ից 1/500 վրկ. **Սպիտակի հաշվեկշիռ** Ինքնաշխատ կառավարմամբ Նախադրված՝ ցերեկային լույս (առնվազն 5600 K),							

			Շիկացման լամպ (առնվազն 3200 K) Ձեռքով կարգավորում՝ գունային ջերմաստիճանի ընդգրկույթը՝ 2000–15000 K Ելքային արժեքը 1-ին և 2-րդ տեղադրումների համար՝ 5600 K **Նկարահանման ռեժիմները** Ծրագրային ավտոլուսակայում՝ AUTO ռեժիմ Ձեռքով կարգավորվող ռեժիմ (M) Ծրագրային ավտոլուսակայում (P)՝ ինքնաշխատ լուսակայում փականակի առաջնությամբ (Tv), ինքնաշխատ լուսակայում դիաֆրագմայի առաջնությամբ (Av), ձեռքով կարգավորվող լուսակայում (M), SNC (դիմանկար, սպորտ, գիշերային տեսարան, ձյուն, լողափ, մայրամուտ, թույլ լուսավորություն, լուսարձակ, հրավառություն), ինֆրակարմիր ռեժիմ Օգտատիրոջ կողմից պատկերի կարգավորումների մենյու՝ C1 սովորական (BT.709 սովորական / BT.709) C2-C6: USER02-USER06 Պատկերի տեսքի կարգավորումներ՝ Ստանդարտ (կարգավորումներ՝ հստակություն, ցայտունակություն, գույնի խորություն) Գունային մատրիցի կարգաբերումներ-Ձեզոք՝ ճշգրիտ գունափոխանցում Վիդեո՝ գունափոխանցման ավելի բարձր ցայտունակություն Ինֆրակարմիր նկարահանման ռեժիմի առկայություն (կանաչ և սպիտակ) Ներկառուցված ինֆրակարմիր լամպի առկայություն՝ հանովի բռնակի վրա Ալիքի երկարությունը՝ 850 նմ (մերձակա ինֆրակարմիր տիրույթ) **Ձայն** Ձայնագրության ձևաչափ՝ MPEG-2 AAC-LC (16 բիթանոց երկուղի ձայն) / LPCM (16 բիթանոց քառուղի ձայն) Ձայնի կառավարումը՝ Ձեռքով/ինքնաշխատ Անկախ երկուղի գին/խոսափող / խոսափող և մուտք 48 Վ Յուրաքանչյուր ձայնուղու համար բարձրության մակարդակի անկախ կառավարում (-∞-ից +18 դԲ) Ձայնային ազդանշանի բարձրության անկախ սահմանափակիչներով (2 ձայնուղի) Ձայնի մաքրում-Հենարանային տոն 1 կՀց, -12 դԲ / -18 դԲ / -20 դԲ / անջատված Խոսափողային նվազիչ՝ Միացված/անջատված (20 դԲ) Խոսափողի ազդանշանի մակարդակի ցուցիչի առկայություն **Կից աքսեսուարներ**							

			Առաքման լրակազմ՝ Օբյեկտիվի լուսապաշտպան բլենդ սահափականով, խոսափողի բռնիչ, բռնակի բլոկ, մարտկոց, USB PD-E1 սնուցման ադապտեր, սնուցման լար **Սնուցման աղբյուր** Մարտկոցը՝ լրակազմի մեջ Էներգասպառում՝ UHD- MP4, 150 Մբ/վ 25.00P՝ ≈4,5 Վտ, XF-AVC, 160 Մբ/վ, 25.00P՝ 4,5 Վտ , Full HD. MP4, 35 Մբ/վ 50.00P՝ ≈4,6 Վտ, XF-AVC, 45 Մբ/վ 50.00P՝ ≈4,6 Վտ Տեսագրության տևողություն՝ UHD MP4: 150 Մբ/վ / 25.00p՝ առավելագույն 165 րոպե, սովորաբար 95 րոպե / առավելագույնը 240 րոպե,սովորաբար 140 րոպե XF-AVC: 160 Մբ/վ / 25.00P՝ առավելագույնը 160 րոպե, սովորաբար 95 րոպե: Առավելագույնը 230 րոպե, սովորաբար 145 րոպե Ֆիզիկական բնութագրեր Չափսերը՝ Իրանը՝ մոտավորապես 109 x 84 x 182 մմ Լուսապաշտպան բլենդի, մարտկոցի և խոսափողի բռնիչի և բռնակի հետ միասին՝ մոտավորապես 131 x 180 x 231 մմ Քաշը (միայն իրանը) ≈750 գրամ Քաշը (աքսեսուարների հետ միասին)≈1140 գրամ Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ 0-ից 40 °C 85% հարաբերական խոսավության պայմաններում **Տեսախցիկի հետ առաքվող բոլոր բաղադրիչների բացարձակ փոխադարձ համատեղելիությունը երաշխավորված է արտադրողի կողմից: Առաջարկվող տեսախցիկի և նրա հետ մատակակարվող՝ արտադրողի կողմից նախատեսված բոլոր անհրաժեշտ պարագաների առկա են:** **Երաշխիքային սպասարկում. առաջարկվող տեսախցիկի և նրա հետ մատակարարվող բոլոր պարագաների համար արտադրողի կողմից տրված 1 տարվա երաշխիքային սպասարկում:** **Տեսախցիկի և նրա հետ մատակարարվող բոլոր պարագաները՝ չօգտագործված և գործարանային փաթեթավորմամբ, պիտակավորմամբ:**							

32351100/7	Փոդքաստների ստեղծման վահանակ	Rode, RODERCaster Duo	**Փոդքաստների ստեղծման վահանակ հետևյալ տեխնիկական տվյալներով՝** • Հաճախականությունների ընդգրկույթը խոսափողային մուտքերի համար՝ 20 Հց-ից 20 կՀց • Հաճախականությունների ընդգրկույթը մոնիտորային ելքերի համար՝ 20 Հց-ից 20 կՀց • Խոսափողի մուտքային դիմադրությունը՝ 4KΩ • Գործիքի մուտքային դիմադրություն՝ 1MΩ • Նախաուժեղաղարի ուժեղացման ընդգրկույթը՝ 0 – 76 դԲ • Համարժեք աղմուկը՝ -131.5դԲՎ (A-կշռված) • Գծային ելքի մակարդակը՝ 4dBu • Ականջակալների ելքային հզորությունը՝ 250 ՄՎտ • Էլեկտրաէներգիայի սնուցման պահանջները՝ USB-C PD (9V, 3A) • Անալոգային աուդիոմուտքի միացումը՝ 2 համակցված հարակցիչ (միկրոֆոն, գործիք, գծային) 1 3.5 TRRS հարակցիչ ականջակալի համար (մուտք/ելք) • USB միջերես 1՝ 2 մուտքով և 14 ելքով 1 բազմուղի սարք 1 x 2 մուտք/2 ելք՝ մինուսում խառնմամբ (with mix-minus) • USB միջերես 2՝ 1 x 2 մուտք/2 ելք՝ մինուսում խառնմամբ (with mix-minus) • Բիթային խորությունը՝ 32 բիթ (USB1) / 24 բիթ (USB2) • Ընդհատավորման հաճախականությունը՝ 48kHz • Ձայնագրությունների պահպանման հնարավորություն՝ microSDHC, microSDXC, USB-C հանովի սկավառակ (exFAT — նվազագույնը 100 Մբ/վ) • Տվյալների փոխանցման ապահովում՝ USB 3.0 SD քարտի ընթերցիչ 130 Մբ/վ արագությամբ • Ցանցային միացումը՝ WiFi 802.11g/n/ac 2.4 ԳՀց և 5 ԳՀց, Ethernet 100/100 • Ներքին պահոցը՝ 4 ԳԲ (SMART պանելներ) • Օպերացիոն համակարգին ներկայացվող պահանջները՝ macOS 10.15 կամ բարձր, Windows 10 1803 կամ բարձր, Windows 11 • Քաշը՝ 1131 գ • Չափսերը՝ 235x225x76 մմ (երկարություն-լայնություն-բարձրություն) • Սնուցման բլոկ և USB-C – USB-C մալուխ Երաշխիքային սպասարկում փոդքաստների ստեղծման վահանակին տրվում է 1 տարվա երաշխիք: Ապրանքը և նրա բաղադրիչները՝ չօգտագործված և գործարանային փաթեթավորմամբ ու պիտակավորմամբ:	հատ	327600	327600	1	**Ք.Երևան , Ծիծեռնակաբերդի խճ.8/8**	1	**Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում**

ԳՆՈՐԴ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ
ՀՎՀՀ՝ 00007386
Ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճ 8/8
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570092753870100
Տնօրենի՝ Է.Գզոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սոֆոն» ՍՊԸ
ՀՎՀՀ 00232725
Հասցե՝ ք.Գյումրի, Սայաթ-Նովա 3/3
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050122232641001
Տնօրեն՝ Մ.Մաթոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«31» հուլիսի 2024 թ. կնքված
ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-07/24/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
32231400 /1	Տեսախցիկ 1	-	-	-	-	-	-	-	1318800	1318800	1318800	1318800	1318800	1318800
32231400 /2	Տեսախցիկ 2	-	-	-	-	-	-	-	1155600	1155600	1155600	1155600	1155600	1155600
32351100 /7	**Փողքաստների ստեղծման վահանակ**	-	-	-	-	-	-	-	327600	327600	327600	327600	327600	327600

ԳՆՈՐԴ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ
ՀՎՀՀ՝ 00007386
Ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճ 8/8
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ ՝ 1570092753870100
Տնօրենի ՝ Է.Գզոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սոֆոն» ՍՊԸ
ՀՎՀՀ 00232725
Հասցե՝ ք.Գյումրի, Սայաթ-Նովա 3/3
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050122232641001
Տնօրեն՝ Մ.Մաթոսյան

/ստորագրություն/
Կ.Տ